ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/02

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Գալիմա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Քոյլոյանի (լիազորագիր տրված՝ 14.01.2021թ.),

քննելով «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀ-ԱՊՁԲ-ՄՍԿՀ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթակարգի շրջանակներում «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից 25.01.2021թ. ներկայացված (25.01.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/02 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Գալիմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Գալիմա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 25.01.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ը 18.12.2020 թվականին հրապարակել է «ԳՀ-ԱՊՁԲ-ՄՍԿՀ-21/01» ծածկագրով գնանշման հարցման հայտարարությունը և հրավերը, իր կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով:

Պատվիրատուի կողմից իր կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման վերաբերյալ գնումների պլանը փոփոխվել է 27.11.2020 թվականին և հրապարակվել 11.12.2020 թվականին, որում որպես գնման ձև ընտրվել է մեկ անձից:

Պատվիրատուի կողմից իր կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման վերաբերյալ գնումների պլանը փոփոխվել է 25.12.2020 թվականին և հրապարկվել 28.12.2020 թվականին, որում որպես գնման ձև ընտրվել է գնանշման հարցումը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկագիրը՝ սույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Նույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝

1) պատասխանատու ստորաբաժանում, և

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: (...):

Նշված իրավական նորմերի վերլուծությունից պետք է արձանագրել հետևյալը, որ գնման գործընթացի իրավական հիմքը Պատվիրատուի կողմից հաստատված և հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված գնումների պլանն է, որը կարող է հիմք հանդիսանալ գնման գործընթաց սկսելու, պատասխանատու ստորաբաժանում, գնումների համակարգող և հանձնաժողով ձևավորելու համար: Այլ կերպ ասած, եթե օրենսդրական կարգի պահպանմամբ հրապարակված չէ գնումների պլանը, ապա առկա չէ իրավական հիմքը և Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ և ոչ իրավաչափ է, ուստի ենթակա է չեղարկման:

Նշվածը իր հերթին համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, Պատվիրատուն իր 2020 թվականի գնումների պլանում փոփոխություն կատարելու վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակել է 25.12.2020 թվականին, իսկ մինչ այդ հրապարակված գնումների պլանում գնման ձևը նշված է եղել մեկ անձից, այսինքն 25.12.2020 թվականին Պատվիրատուի կողմից իր 2020 թվականի գնումների պլանում փոփոխություն կատարելու արդյունքում նոր միայն ընտրվել է գնման ձևը գնանշման հարցման եղանակով: Իսկ ավելի վաղ հայտարարված հրավերը հրապարակվել է գնանշման հարցման եղանակով, որից հետևում է, որ առկա չի եղել գնանշման հարցման եղանակով գնման ընթացակարգ նախաձեռնելու իրավական հիմքը և ավելի ուշ գիտակցելով այդ հանգամանքը Պատվիրատուն գնման ընթացակարգը սկսելուց հետո իր գնումների պլանը փորձել է համապատասխանեցնել հրապարակված հրավերին, թույլ տալով գործող օրենսդրական կարգի խախտում»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է չեղարկել «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԳՀ-ԱՊՁԲ-ՄՍԿՀ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգը՝ 73-րդ չափաբաժինը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.02.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

2. «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.02.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀ-ԱՊՁԲ-ՄՍԿՀ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***18.12.2020թ.***:

2. «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳՀ-ԱՊՁԲ-ՄՍԿՀ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակվել է ***28.12.2020թ.***:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից 25.01.2021թ. ներկայացված բողոքը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը** նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները**, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն **հրապարակում է տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) **գնման գործընթացի կազմակերպում** (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է,** իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով <u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում</u> գրավոր սահմանվում են՝**

1) պատասխանատու ստորաբաժանում, և

2) **գնումները համակարգող**

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **<u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում</u> պատասխանատու ստորաբաժանումը՝**

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը…:

Այսպես, «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀ-ԱՊՁԲ-ՄՍԿՀ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել են ***<u>18.12.2020թ.</u>***:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննության շրջանակներում դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակված լինելը հավաստող՝ կայքից արտատպված փաստաթուղթը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ այն հրապարակվել է ***<u>28.12.2020թ.-ին</u>***՝ ավելի ուշ քան, Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը, ընդ որում, վերոհիշյալ նորմերից բխում է, որ պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման և գնումները համակարգողի համապատասխան իրավասություններն առաջանում են գնումների պլանի հրապարակման հաջորդող օրվանից:

Այսպիսով՝ վերը շարադրված փաստերով պայմանավորված՝ արձանագրում եմ, որ «ԳՀ-ԱՊՁԲ-ՄՍԿՀ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել են գնման գործընթացի կազմակերպման «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները, ուստի գտնում եմ, որ Ընթացակարգը՝ 73-րդ չափաբաժնի մասով պետք է հայտարարվի չկայացած:

Անդրադառնալով Ընկերության ներկայացուցչի կողմից 01.12.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի ընթացքում արված հայտարարություններին՝

1. Նիստի ընթացքում Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ գտնում է, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը վերջնական որոշում կայացնելիս պետք է անդրադառնա ամբողջ գնման ընթացակարգին, այլ ոչ թե միայն 73-րդ չափաբաժնի մասով, այս մասով հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

<u>«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:</u>

Պատվիրատուի կողմից 20.01.2021թ. հրապարակվել է «ԳՀ-ԱՊՁԲ-ՄՍԿՀ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարություն, համաձայն որի՝ կազմակերպված Ընթացակարգի չափաբաժիններից գերակշռի մասով՝ 2, 6, 9, 10, 11, 26, 28, 47, 49, 52, 68, 70, 72, 87, 89, 100, 101, 103, 112, 117, 3, 4, 5, 8, 12, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 25, 27, 31, 33, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 44, 45, 46, 50, 51, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 65, 66, 67, 69, 71, 82, 85, 91, 92, 94, 95, 99, 102, 104, 105, 107, 108, 109, 110, 113, 114, 115, 116, 118, 119, 120, 121, 123, 30, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 88, 90, 111, 93, սույն թվականի հունվարի 20-ին կնքվել են պայմանագրեր:

Հետևաբար՝ վերը շարադրված չափաբաժինների մասով 20.01.2021թ. կնքված պայմանագրերի առկայության պայմաններում Ընկերության ներկայացուցչի կողմից արված այս դիտարկումը չի կարող քննության առնվել, և բողոքը ենթակա է քննության միայն Ընթացակարգի 73-րդ չափաբաժնի մասով:

2 Ընկերության ներկայացուցիչը նաև հայտնեց, որ սկզբնական բողոքը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից հետ է վերադարձվել՝ նշելով, որ Պատվիրատուի հայտնած տեղեկությունների հիման վրա առկա են մի քանի չափաբաժիններով կնքված պայմանագրեր, և անհասկանալի է, թե դեռևս բողոքը վարույթ ընդունված չլինելու պայմաններում ինչ դիրքորոշման հիման վրա է եկել նման

համոզման կամ Պատվիրատուն ինչ կերպ է ներկայացրել իր դիրքորոշումը, այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն Ընկերության լիազորված ներկայացուցչին ուղղված 22.01.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/800-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ուսումնասիրվել է Ձեր 21.01.2021թ. բողոքը (հետայսու՝ Բողոք), որի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Բողոքի պահանջով բողոքաբերը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է չեղարկել «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի (հետայսու՝ Պատվիրատու) կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԳՀ-ԱՊՁ-ՄՍԿՀ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգը:

Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) 20.01.2021թ. հրապարակվել է «ԳՀ-ԱՊՁԲ-ՄՍԿՀ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգի (հետայսու՝ Ընթացակարգ) արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարություն, համաձայն որի՝ կազմակերպված Ընթացակարգի չափաբաժիններից գերակշռի մասով՝ 2, 6, 9, 10, 11, 26, 28, 47, 49, 52, 68, 70, 72, 87, 89, 100, 101, 103, 112, 117, 3, 4, 5, 8, 12, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 25, 27, 31, 33, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 44, 45, 46, 50, 51, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 65, 66, 67, 69, 71, 82, 85, 91, 92, 94, 95, 99, 102, 104, 105, 107, 108, 109, 110, 113, 114, 115, 116, 118, 119, 120, 121, 123, 30, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 88, 90, 111, 93, սույն թվականի հունվարի 20-ին կնքվել են պայմանագրեր:

Ուստի հիմք ընդունելով Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջը՝ Բողոքը վերադարձվում է, քանի որ Բողոքն ըստ էության վերաբերելի է Ընթացակարգի բոլոր չափաբաժիններին, սակայն Բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 21.01.2021թ., վերը շարադրված չափաբաժինների մասով արդեն իսկ, համաձայն Պատվիրատուի հայտարարության, առկա են կնքված պայմանագրեր»:

Այսինքն՝ Ընկերության ներկայացուցչի այս դիտարկումը ևս անհիմն է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Գալիմա» ՍՊԸ-ի կողմից 25.01.2021թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ԳՀ-ԱՊՁ-ՄՍԿՀ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ Ընթացակարգը 73-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**